



COUNCIL OF EUROPE    CONSEIL DE L'EUROPE

*European Treaty Series - No. 87*

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ**

**ԱՏՐԱՍԲՈՒՐԳ -10.03. 1976թ.**

Սույն կոնվենցիայի պայմանավորվող կողմ հանդիսացող Եվրոպական խորհրդի անդամ պետությունները

Ընդունելով, որ ցանկալի է մշակել համընդհանուր դրույթներ գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության վերաբերյալ, մասնավորապես անասնաբուժական ժամանակակից ինտենսիվ համակարգերում

Համաձայնության եկան ներքոշարադրյալի շուրջ.

## **ՔԼՈՒԽ 1-ին – ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

### **Հոդված 1**

Սույն կոնվենցիան վերաբերվում է մասնավորապես ժամանակակից մեծածավալ անասնաբուժական տնտեսություններում կենդանիների պահվածքին, խնամքին, ինչպես նաև կենդանիներին պահելու համար անհրաժեշտ գյուղատնտեսական շինությունների (անասնագոմեր և այլն) ապահովմանը: Սույն կոնվենցիայի համատեքստում **կենդանի** նշանակում է. սնունդ, բուրդ, կաշի, մորթի ստանալու և այլ գյուղատնտեսական նպատակներով բուծվող և պահվող կենդանիներ: Իսկ **անասնաբուժական ժամանակակից ինտենսիվ համակարգեր** նշանակում է համակարգեր, որոնց տեխնիկական սարքավորումների զգալի մասը գործում է ավտոմատացված ձևով:

### **Հոդված 2**

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ պետք է պահպանի կենդանիների բարեկեցությանը վերաբերող այն հիմնական սկզբունքները, որոնք շարադրված են սույն կոնվենցիայի երրորդից յոթերորդ հոդվածներում:

### **Հոդված 3**

Կենդանիները պետք է ապահովվեն ապրելատեղով, կերով, ջրով և խնամվեն այնպիսի մեթոդներով, որոնք համապատասխանում է նրանց տեսակին, ինչպես նաև զարգացման, հարմարվելու և դոմեստիկացման աստիճանին՝ հաշվի առնելով կենդանիների ֆիզիոլոգիական և էթոլոգիական պահանջները և հիմնվելով կուտակված պրակտիկ փորձի և գիտական տվյալների վրա:

### **Հոդված 4**

1. Կենդանու տեղաշարժվելու ազատությունը՝ համապատասխան նրա տեսակի, ինչպես նաև կուտակված պրակտիկ փորձի և գիտական տվյալների, չպետք է սահմանափակվի այն աստիճան, որ դա պատճառ հանդիսանա կենդանիների անհարկի տանջանքի և վնասվածքների:
2. Եթե կենդանին շարունակաբար կամ պարբերաբար կապվում է կամ սահմանափակվում, ապա նրան պետք է հատկացվի տարածություն իր ֆիզիոլոգիական և էթոլոգիական պահանջներին համապատասխան և համաձայն կուտակված փորձի և գիտական գիտելիքի:

### **Հոդված 5**

Լուսավորությունը, ջերմաստիճանը, խոնավությունը, օդի շրջանառությունը /ցիրկուլյացիան/, օդափոխությունը և այլ պայմանները /ինչպես, օրինակ, զազիկոնցենտրացիան կամ աղմուկի ինտենսիվությունը այն տարածքում, որտեղ պահվում է

կենդանին / պետք է համապատասխանեն նրանց ֆիզիոլոգիական և էթոլոգիական պահանջներին՝ ըստ հաստատված փորձի և գիտական գիտելիքի և հաշվի առնելով նրանց տեսակը, բազմանալու, հարմարվելու և ընտելանալու աստիճանը:

### **Չորրորդ 6**

Ոչ մի կենդանի չպետք է կերակրվի կամ ջրվի այնպես, որ դա անհարկի տանջանքի կամ վնասվածքների պատճառ հանդիսանա:

### **Չորրորդ 7**

1. Կենդանիների առողջական վիճակն ու պայմանները պետք է լիովին ստուգվեն այպիսի հաճախականությամբ, որը բավարար լինի անհարկի տանջանքը բացառելու համար, իսկ ժամանակակից մեծ ֆերմերային համակարգերում պահվող կենդանիների դեպքում այդ ստուգումները պետք է կատարվեն առնվազն օրը մեկ անգամ:
2. Ժամանակակից մեծ անասնաբուժական ֆերմերային համակարգերում օգտագործվող տեխնիկական սարքավորումները պետք է ամբողջությամբ ստուգվեն նվազագույնը օրը մեկ անգամ, յուրաքանչյուր բացահայտված անսարքություն պետք է վերացվի հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Այն դեպքում, երբ անսարքությունը հնարավոր չէ անհապաղ վերացնել, պետք է անմիջապես ձեռնարկվեն կենդանիների բարեկեցությունը պահպանելուն ուղղված բոլոր ժամանակավոր միջոցները:

## **ԳԼՈՒԽ 2-րդ - Կիրառման /կիրարկման/ մանրամասները**

### **Չորրորդ 8**

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում պետք է ստեղծվի Մշտական հանձնաժողով:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ Մշտական հանձնաժողովում ներկայացուցիչ նշանակելու իրավունք ունի: Եվրոպայի Խորհրդի որևէ անդամ պետություն, որը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի պայմանավորվող կողմ, իրավունք ունի ներկայացված լինելու հանձնաժողովում դիտորդի կարգավիճակով:
3. Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարը իրավունք ունի անհրաժեշտության դեպքում հրավիրելու մշտական հանձնաժողովի նիստ, ինչպես իր հայեցողությամբ, այնպես էլ պայմանավորվող կողմերի մեծամասնության կամ պայմանավորվող կողմ հանդիսացող Եվրոպական Տնտեսական Միության ներկայացուցիչների պահանջով:
4. Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչների մեծամասնությունը պետք է ապահովի քվորում, որն անհրաժեշտ է մշտական հանձնաժողովի նիստի կայացման համար:
5. Մշտական հանձնաժողովը պետք է կայացնի իր որոշումները ձայների մեծամասնությամբ, սակայն որոշ դեպքերում պահանջվում է միաձայն քվեարկություն.
  - 9-րդ հոդվածի առաջին կետով նախատեսված հանձնարարականների ընդունման դեպքում
  - սույն հոդվածի 2-րդ կետում նշված /թվարկված/ ներկայացուցիչներից բացի,

այլ ներկայացուցիչների անդամագրման դեպքում

- 13-րդ հոդվածում նշված զեկուլցի ընդունման դեպքում. անհրաժեշտության դեպքում այն կարող է հրապարակվել:

6. Հաշվի առնելով սույն կոնվենցիայի դրույթները՝ մշտական հանձնաժողովը պետք է կազմի իր սեփական կանոնադրությունը:

### **Հոդված 9**

1. Մշտական հանձնաժողովը պատասխանատու է հանձնարարականների մշակման և ընդունման համար՝ դրանք պայմանավորվող կողմերին ներկայացնելու նպատակով: Այդ հանձնարարականները պետք է պարունակեն մանրամասն դրույթներ՝ սույն Կոնվենցիայի 1-ին մասում ներկայացված սկզբունքների կիրառման նպատակով, հաշվի առնելով կենդանիների տարբեր տեսակների մասին ունեցած գիտական փաստերն ու գիտելիքները:
2. Սույն հոդվածի առաջին կետում նշված պարտականությունների իրականացման նպատակով մշտական հանձնաժողովը պետք է հետևի գիտական ուսումնասիրությունների արդյունքներին, և նոր մեթոդներին՝ կենդանիների գյուղատնտեսության բնագավառում:
3. Հանձնարարականները պետք է ուժի մեջ մտնեն Հանձնաժողովի կողմից հաստատվելու օրվանից վեց ամիս անց, բացառությամբ այն դեպքերի, երբ Մշտական Հանձնաժողովը որոշում է կայացնում երկարացնելու այս ժամկետը: Հանձնարարականի ուժի մեջ մտնելու պահից (օրվանից) յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ պետք է կամ սկսի ի կատար ածել դրանք, կամ Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին ուղղված տեղեկագրի միջոցով տեղեկացնի Մշտական հանձնաժողովին այն հանգամանքների մասին, որոնց հիման վրա նա որոշում է կայացրել, որ չի կարող կամ այլևս չի կարող կատարել այդ հանձնարարականները:
4. Եթե երկու կամ ավելի Պայմանավորվող կողմ կամ Եվրոպական Տնտեսական Միությունը, ինքը լինելով Պայմանավորվող կողմ, տեղեկացրել են, ըստ սույն Հոդվածի 3-րդ կետի, տվյալ հանձնարարականը չկատարելու/կամ այլևս չկատարելու իրենց որոշման մասին, ապա տվյալ հանձնարարականի իրականացումը դադարեցվում է:

### **Հոդված 10**

Մշտական հանձնաժողովը պետք է զործադրի իր բոլոր ջանքերը՝ նպաստելու համար սույն կոնվենցիայի իրականացմանը խանգարող հնարավոր դժվարությունների բարեհաջող հաղթահարմանը:

### **Հոդված 11**

Պայմանավորվող կողմերի խնդրանքով Մշտական հանձնաժողովը կարող է հայտնել խորհրդատվական կարծիք՝ կենդանիների պաշտպանության հետ առնչվող հարցերի վերաբերյալ:

**Ֆողված 12**

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է նշանակել մեկ-երկու հոգի, ում Մշտական հանձնաժողովը պետք է դիմի՝ տեղեկություններ և խորհուրդ ստանալու նպատակով: Պայմանավորվող կողմերը պետք է հաղորդեն Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարին այդ անուններն ու հասցեները:

**Ֆողված 13**

Մշտական հանձնաժողովը պետք է ենթարկվի Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեին. սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահից երրորդ տարին լրանալուն պես և այնուհետև յուրաքանչյուր երեք տարին մեկ՝ պետք է հաշվետվություն ներկայացնի իր աշխատանքի և համաձայնագրի գործառնության վերաբերյալ, այդ թվում, եթե անհրաժեշտ է, առաջարկություններ մտցնի սույն կոնվենցիայում:

**ԳԼՈՒԽ 3-րդ - Եզրափակիչ դրույթներ****Ֆողված 14**

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Եվրոպայի Խորհրդի և Եվրոպական Տնտեսական Միության անդամ պետությունների կողմից: Այն ենթակա է է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման և հաստատման փաստաթղթերն ի պահ են տրվում Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների կողմից վավերացման, ընդունման կամ հաստատման չորրորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից վեց ամիս հետո:

3. Ստորագրող կողմի առնչությամբ, որը կվավերացնի, կընդունի կամ կհաստատի սույն հոդվածի 2-րդ կետում նշված օրվանից հետո, Կոնվենցիան ուժի մեջ կմտնի վավերացման, ընդունման և հաստատման փաստաթղթերն ի պահ հանձնելու օրվանից վեց ամիս հետո:

**Ֆողված 15**

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն համապատասխան պայմանների դեպքում կարող է հրավիրվել ցանկացած ոչ-անդամ պետությանը միանալ սույն Կոնվենցիային:
2. Նման միացումը պետք է իրականացվի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին ի պահ հանձնելով միանալու մասին փաստաթուղթը և այն կհամարվի կատարված՝ փաստաթուղթը հանձնելուց վեց ամիս հետո:

**Ֆողված 16**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման, միանալու մասին իր փաստաթղթերն ի պահ հանձնելու ժամանակ կարող է նշել տարածքը կամ տարածքները, որտեղ պետք է կիրառվի սույն Կոնվենցիան:

2. Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր փաստաթղթերն ի պահ հանձնելիս կամ հետագայում ցանկացած այլ ժամանակ կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին ուղղած հռչակագրով ընդլայնել սույն Կոնվենցիայի գործողությունը ցանկացած այլ տարածքի կամ տարածքների վրա, որոնք նշված են հռչակագրում և որոնց միջազգային հարաբերությունների համար նա պատասխանատու է կամ որոնց անունից նա լիազորված է պարտավորություններ վերցնել:
3. Համաձայն նախորդ կետում նշված կարգի՝ կատարված ցանկացած հռչակագիր դրանում նշված ցանկացած տարածքի առնչությամբ կարող է հետ կանչվել՝ սույն կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն:

### **Պոլված 17**

1. Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է իր մասով չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ նոտիֆիկացիա ուղղելով Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին:
2. Նման չեղյալ հայտարարումը սկսում է գործել Գլխավոր Քարտուղարի կողմից նման նոտիֆիկացիա ստացումից վեց ամիս հետո:

### **Պոլված 18**

Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարը տեղեկացնում է Խորհրդի անդամ պետություններին և յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի, որը Խորհրդի անդամ չէ, հետևյալի մասին.

ա. ցանկացած ստորագրության

բ. վավերացման, ընդունման, հաստատման և միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին

գ. յուրաքանչյուր Խորհրդատվական որոշման և այն ուժի մեջ մտնելու մասին համապատասխան 9-րդ հոդվածի առաջին կետի

դ. յուրաքանչյուր հայտարարության ստացման մասին՝ համաձայն 9-րդ հոդվածի երրորդ կետի դրույթների

ե. յուրաքանչյուր հաղորդակցության մասին՝ համաձայն 12-րդ հոդվածի դրույթների:

զ. յուրաքանչյուր ստացված հռչակագրի մասին՝ համաձայն 16-րդ հոդվածի երկրորդ և երրորդ կետերի դրույթների

է. յուրաքանչյուր ստացված նոտիֆիկացիայի և ուժը կորցնելու օրվա մասին՝ համաձայն 17-րդ հոդվածի դրույթների:

Ի վկայություն որի, ներքոստորագրողները, պատշաճ ձևով լիազորված լինելով, ստորագրեցին սույ կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգում 1976թ. մարտի 10-ին; անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, երկու տեքստն էլ ունեն նույն իրավաբանական ուժը; մեկ բնօրինակով, որը պետք է ի պահ հանձնվի Եվրոպայի Խորհրդի արխիվ: Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է փոխանցի հաստատված օրինակները յուրաքանչյուր ստորագրողին և միացած կողմերին: